ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 56–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/7 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 4/7 հասցեի շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15042015-08-0012 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարի խճուղի N 4/7 հասցեի 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-057 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի